թէպէտ մի քանի անգամ յարձակվեցան ամբոխի վրա, բայց ստիպված էին յետ քաշվել։ Այս դէպքից երևում է, որ Իռլանդիայի մէջ գործադրվող արտաքոյ կարգի օրէնքները անօգուտ են։ Ասում են, որ Գլադստոն և նրա մինիստրութիւնը բաւական են Իռլանդիայի մէջ կատարվող անկարգութիւններից, որովհետև նրանք փախցնում են պարլամենտին և զրկում են նրան ընդունել կառավարութեան առաջարկած միջոցները։

ՖՐԱՆՍԻԱ

1870 թուականին Լօտ նահանգի սպանված կամաւորների արձանի բացման ժամանակ Կահօրի մէջ Գամբետտա ասաց հետևեալ ճառը։

Մենք առանձնապէս պէտք է պատւենք նրանց, որոնք սպանվեցան անաջողութիւնների ժամանակ, որոնք թափեցին իրանց արիւնը, ոչինչ յոյս չունենալով։ Պէտք է այս արձանը օրինակ լինի ապագայ սերունդների համար։ Բայց հանգստացէք. սա պէտք է օրինակ լինի ոչ թէ յարձակողական, բռնաւախնդիր, կամ ուրիշի սեփականութիւնը խլեցնելու ձգտող քաղաքականութեան, այլ ընդհակառակը այս արձանը պէտք է ապացուցանի, որ մեզանից պատուած մարդիկը սպանվեցան այն պատճառով, որ ազգը կուրօրէն գցեց իրան մի մարդու ձեռքը։

Յիշեցնելով կուսակցութիւնների համաձայնութիւնը պատերազմի ժամանակ, Գամբետտա ցաւակցութիւն յայտնեց, որ այդ համաձայնութիւնը չը շարունակվեց խաղաղական ձևի հաստատելու ժամանակ։

Այդ համաձայնութիւնը այժմ հիմնովին է վերականգնվում է, չը նայելով անզօր կուսակցութիւնների ընդդիմադրութեանը, ասաց նա։ Բայց չը մոռանանք անցեալի դասերը, ներողամիտ լինենք միմեանց վերաբերութեամբ։ Այնպիսի դժբաղդութիւններ, որ մենք այժմ յիշում ենք, պատահում են ընդհանուր ժողովրդական մեղքերի պատճառով։ Մի քանիսը մեղանչում էին թուլութեամբ, միւսները լրբութեամբ և բռնաւորութեամբ։ Մեծամասնութիւնը մեղանչում էր աններելի անտարբերութեամբ դէպի հասարակական գործերը և ամենքն կրեցին իրանց պատիժը պատմութիւնից և հասարակական կարծիքից։ Այժմ մենք կրկնակի ապահովութիւն ունենք, որ Ֆրանսիայի սուրը որ և է բաղդախնդրի ձեռքին չէ կարող ներքին բռնութեան և անարդար տիրապետութիւնների զէնք դառնալ։ Առաջին ապահովութիւնը զինուորական ընդհանուր պարտադիր ծառայութիւնն է, իսկ երկրորդն այն փաստը, որ այժմ առանց ժողովրդական կամքի անկարելի է պատերազմի կամ խաղաղութեան հարցը վճռել։ Հաւատացէք, որ զօրքերը Ֆրանսիայի գլխաւոր հոգսն են այն պատճառով, որ այդ զօրքերը ինքը Ֆրանսիան է, նրա երիտասարդութիւնը և նրա ապագան։ Բայց ֆրանսիական ազգը հաստատ վճռել է պահպանել խաղաղութիւնը, որովհետև նրա մէջ պէտք ունի։ Մի հաւատաք նրանց, որոնք ասում են, թէ դէպի պատերազմական պատիւը զգայուն զօրքերը վտանգաւոր են խաղաղութեան համար։ Երկարատև և ամուր խաղաղութիւնը հիմնված է զօրքերի ույժի և նրա ազգային կազմակերպութեան վրա։ Ինչ ուզում են ասեն, բայց դուք հաւատացէք խաղաղութեան հաստատ լինելուն։ Երկրի կառավարիչները դուք էք և առանց ձեր կամքի, առանց ազգի կամքի ոչինչ չի անուիւ։ Հանրապետականները այն են ցանկանում, ինչոր Ֆրանսիան է ցանկանում, այսինքն խաղաղութիւն, ազատութիւն, առաջադիմութիւն և ֆրանսիական ժողովրդի մտաւոր ույժերի զարգացումն։

Այս ճառը թէ Ֆրանսիայի և թէ օտար երկիրների մէջ շատ լաւ տպաւորութիւն գործեց։ Գերմանական լրագիրները այդ ճառը անուանում են մի ցոյց յօգուտ խաղաղութեան։

Գամբետտա իրան ցոյց տուած պատւի մասին նկատել է, որ դա չէ վերաբերում իր անձնաւորութեանը, այլ սկզբունքին, այն է հանրապետութեանը և որ Գամբետտային ցոյց տուած հասարակական համակրութիւնը պարտաւորեցնում է նրան՝ ժողովրդին աւելի մեծ եռանդով ծառայել։

Փարիզից հաղորդում են հետևեալը։ Հեռու չէ այն ժամանակը, երբ Փարիզի բուրժուազիան և ֆրանսիական կառավարութիւնը կարծում էին, որ մի սաստիկ լրագրական յօդուած, կամ հասարակութեան առաջ արտասանած արմատական մի ճառ կարող էին հասարակութեան համար վտանգաւոր լինել։ Ամենքը համոզված էին, որ մի անզգոյշ խմբագիր, կամ մի անյայտ հրապարակախօս կարող էին „ատելութիւն ծագեցնել կառավարութեան դէմ“ կամ „բնակիչների մէջ փոխադարձ ատելութիւն սերմանել։“ Այսպէս էին անուանվում այդ երկու յանցանքները, որոնց շնորհիւ չափազանց շատ տուգանք է վճարված և շատ մարդիկ են կալանաւորված։

Մի ժամանակ կառավարութիւնը վճռեց ուշադրութիւն չը դարձնել տպագրական և ժողովների մէջ արտասանած այդ նախադասութիւնների վրա։ Ինչ էք անում, կանչում էին պահպանողականները, Փարիզի մէջ այսուհետև էլ ապրել չէ կարելի, բոլոր օրինաւոր մարդիկ կը փախչեն և մենք կենթարկվենք ամբոխի կամայականութեանը։ Մինիստրութիւնը տատանում էր, բայց պատգամաւորների ժողովը ստիպեց նրան այդ փորձն անել։ Դրանից մի անսպասելի հետևանք առաջ եկաւ. յայտնվեցաւ որ ոչ սաստիկ յօդուածները և ոչ արտասանած ճառերը քաղաքական վտանգ չեն ներկայացնում և որ նրանց հետաքրքրութեան պատճառը այն էր, որ նրանք արգելվում էին։ Մի տարի հազիւ անցաւ և ամենքը այնպէս ընտելացան այդ յեղափոխական ազդարարութիւնների և սօցիալական պրօգրամների հետ, որ ոչ ոք այլ ևս նրանց վրա ուշադրութիւն չէ դարձնում։ Կարելի է հետևեալ օրինակը բերել։

Նորերումս կայացաւ բանւորների կոնգրեսը, որ թէպէտ հրապարակական չէր, բայց ամենքը հեշտութեամբ կարող էին ներկայ գտնվել այդ ժողովին։ Բացի այդ ժողովի մէջ խօսված ճառերը միւս օրը տպվում էին լրագիրների մէջ։ Ժողովի ժամանակ զանազան ոգևորված քաղաքացիներ և կանայք իրանց ճառերով քարոզում էին հասարակութեանը և առաջարկում էին ամենաարմատական ձևով ոտնակոխ անել հասարակական այժմեան կազմակերպութիւնը։ Առաջին ժողովի ժամանակ ճառախօսները ոչնչացրին, խօսքով, ի հարկէ, հասարակական սեփականութիւնը, կրօնը, ժառանգութիւնը և այլն, երկրորդ օրը յեղափոխութիւն յայտնեցին և քանդեցին ամեն բան, ինչ որ մնացել էր հին աշխարհից, իսկ երրորդ օրը նոր կառավարութիւն կազմեցին սօցիալական հիմունքների վրա։ Ժողովի ժամանակ Գամբետտային անուանում էին „հաւ աչքանի“, մինիստր, „Ֆերրին“ անազնիւ և այլն։ Այդ բոլորը կատարվում էր Օբերկամպֆի թատրօնում, որի դուռը երկու պօլիցիականներ էին կանգնած միայն ձևի համար։ Ոչ ոք ժողովի վրա ուշադրութիւն չը դարձրեց և նրա մէջ խօսողները ուրախ կը լինէին հալածվել կառավարութիւնից հասարակութեան յայտնի դառնալու համար, բայց նրանց ցանկութիւնները չը կատարվեցան։

Ուրեմն վերյիշեալ յանցանքները ոչինչ նշանակութիւն չունեն և նրանց պատճառով մինչև այժմ ի զուր տեղ միայն մարդկանց հալածում էին։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Լրագիրներին գրում են, որ յունիսի 1-ին Մայնցում խուզարկել են բազմաթիւ անձերի տները, որոնց պօլիցիան կասկածել էր, թէ նրանք պատկանում են սօցիալ-դեմօկրատների թւին, բայց ի բաց առնելով մի քանի անմեղ բրօշիւրներ, գերմանական հիմունքները քանդող ոչինչ չը գտան նրանց մօտ։

—«Моск. Вѣд.» լրագրին Սօֆիայից հեռագրում են, որ բուլղարական իշխանի կառավարութիւնը միջոցներ ընդունեց «Անկախութիւն» լրագրի դէմ. պատասխանատու խմբագիրը բանտարկված է մամուլը ի չար գործ դնելու և իշխանի անձնաւորութիւնը վիրաւորելու պատճառով։

—Լօնդօնի լրագիրներին Սօֆիայից հեռագրում են, որ իշխան Ալէքսանդրի անձնական քարտուղար պ. Ստօյլով հրաժարեցրած է իր պաշտօնից իշխանական շրջաբերականի սխալ թարգմանութեան համար բուլղարական լեզուով։ Իշխանը այս օրերս երկու պատգամաւորութիւններ ընդունեց աղբէններով քրիստոնեաներից և մահմետականներից։ Ամեն օր զանազան պաշտօնական անձինք խնդիրքներ են ներկայացնում, որոնց մէջ խնդրում են ազատ կացուցանել իրանց պաշտօններից։

—Ֆրանսիական լրագիրներին Մադրիդից հաղորդում են, որ սպանիական մամուլի յանձնաժողովը ի պատիւ օտար մամուլի մէկ հրաժարական բանկետ տուեց, ուր ներկայ էին՝ նախկին մինիստր Կանօվաս դէլ-Կաստիլիօ, քաղաքային խորհրդի անդամները, շատերը սպանիական զօրքի օֆիցերներից և ուրիշ անձինք, որոնք մասնակցում էին ի պատիւ Կալդէրօնի լինելի տօնախմբութեան կազմելու մէջ։ Կանօվաս այդ ճաշի վրա ասաց, որ հանճարաւոր մարդուն պատւելու գլխաւոր ծառայութիւնը Թագաւորին է պատկանում, որը հրճուանքով քաջալերեց տօնախմբութեան նախագիծը։ Կանօվաս դէլ-Կաստիլիօ յանկացաւ, որ այդ յօբէլեանը միութեան յենակէտ դառնայ բոլոր կրթված ժողովուրդների մէջ։ «Մեծ մարդիկը, ասաց նա, ամբողջ աշխարհին են պատկանում։ Բոլոր մեծ գրողների ընդհանուր հայրենիքը իմաստութիւնն է։ Կալդէրօնի յօբելեանի առիթով մեր արտայայտած զգացմունքները դէպի ազգային միութիւնը մեր ունեցած ձգտումների ապացոյց են»։

—Լրագիրների մէջ կարդում ենք, որ Իռլանդիայում օրից օր անկարգութիւնները մեծանում են։ Գուրլինում, օր ցերեկով, յարձակվեցան մէկ պօլիցիականի վրա, որը ձիով անցնում էր, առանց զէնքի, նրան ձիուց վայր գցեցին և հաւաքված ամբոխի մէջ աղաղակներ էին լսվում, որ ժամանակ է բաց ապստամբութիւն սկսել լորդերի տիրապետութեան դէմ։ Հողային միութեան էլի երկու գործունեայ անդամներ կալանաւորված են։

—Վիեննայից, մայիսի 27-ին հեռագրում են. Կ. Պօլսից լուրեր են ստացված, որ սուլթանը հրամայեց զօրքերի հրամանատարին Էպիրուսում և Թեսալիայում առանց այլ և այլութեան դատարկել Յունաստանի զիջած գաւառները։ Բ. Դրան և Եգիպտոսի մէջ մեծ անբաւականութիւն է ծագել։ Կ. Պօլսում կարծում են, որ եգիպտական խնդիրը Եգիպտոսի անկախութիւնը կը հրապարակի։

—Լօնդօնից լրագիրներին հեռագրում են, որ Իռլանդիայի արևմտեան մասում յեղափոխական շարժումը զօրեղանում է, ժողովուրդը քանդում է հեռագիրները և կամուրջները։ Զօրքեր են ուղարկված այնտեղ կարգը վերականգնելու համար։

—Յունիսի 4-ին Փարիզում կատարվում էր Լիտրէի թաղումը։ Հանգուցեալի յուղարկաւորութեանը, հասկանալի է, որ մասնակցում էին գիտութեան և գրականութեան մէջ յայտնի անձինք և բազմաթիւ պատգամաւորութիւններ զանազան ընկերութիւններից։ Դագաղի ետևից գնացող բազմաթիւ հասարակութեան մէջ նկատելի էին՝ մինիստրների խորհրդի նախագահ պ. Ժիւլ Ֆէրրի, արտաքին գործերի մինիստր պ. Բարտելէմի Սէնտ-Իլէր, ներքին գործերի մինիստրի ներկայացուցիչ պ. Կազէլս, սենատի նախագահ պ. Լէօն Սէ, բազմաթիւ սենատորներ և գիտական ընկերութիւնների անդամներ, «Revue de philosophie positive» ամսագրի խմբագիրներ և ուրիշները։ Դագաղը տնից դուրս բերելու ժամանակ, 76-րդ գնդի բատալիօնը, ունենալով առջևից երաժշտութիւն, ազգի դրօշակով, զինուորական պատիւներ տուեց հանգուցեալին։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ 2 յունիսի։ Երէկ հասաւ Ս. Պետերբուրգ Սերբիայի իշխան Միլան, շատ պատուաւոր ընդունելութիւն գտաւ և իջաւ ձմերային պալատի մէջ։ Հասնելուց յետոյ շուտով այցելեց Պետրօպավլօվսկի մայր եկեղեցին, Թագաւորի գերեզմանի վրա դրեց արծաթեայ պսակ, իսկ Թագուհու գերեզմանի վրա թարմ ծաղիկներից պսակ։ Ներկայ էր հոգեհանգիստին։ Այսօր ուղևորվում է Գատչինօ Թագաւորին և Թագուհուն ներկայանալու համար։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 յունիսի։ Պետական բանկի $5^0/_0$ տոմսակը առաջին շրջանի արժէ 96 ր. 75 կ., երկրորդ 94 ր. 62 կ., երրորդ 94 ր. $50^1/_2$ կ., չորրորդ 94 ր. 50 կ., ներքին $5^0/_0$ առաջին փոխառութեան տոմսակը արժէ 225 ր. 50 կ., երկրորդ 218 ր. 50 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 93 ր. 12 կ., երկրորդ 93 ր. 12 կ., երրորդ 92 ր. $87^1/_2$ կ., ոսկի 8 ր. 9 կ.։ Ռուսաց 1 ռուբլ Լօնդօնի վրա արժէ 24,43 պէնս, Ամստերդամի վրա 123 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 209 մարկ 25 պֆ., Փարիզի վրա արժէ 258 ֆրանկ։ Բօրսայի տրամադրութիւնը հանգիստ է։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„ԽԵՆԹԸ“
ԱՐԿԱԾՆԵՐ ՎԵՐՋԻՆ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ
ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ ՐԱՖՖԻ

Տպված մաքուր թղթի վրա, գիրքը բաղկանում 400 երեսից։ Թիֆլիսում ծախվում է „Մշակի“ խմբագրատանը, „Կենտրօնական գրավաճառանոցում“, „Կովկասեան գրավաճառանոցում“ պ. Զաքարիա Գրիգորեանցի մօտ, և պ. պ. Շահինեանցի, Բօզարջեանցի, Հովսէփեանցի ծխախոտի մագազիններում։

Գինն է **1** ռուբլ **20** կոպ.։

ԶԱՐՄԱՆԱԼԻ ԷԺԱՆ ԳՆՈՎ
ծախվում է արտասահմանի շօտլանդիական **ՑԵՄԵՆՏ** փօթիի մէջ Էլիբար **ԲԱԲԱԼՕՎԻ** մօտ, Քութայիսի մէջ **ԿՈՒՐՑՕՎԻ** մօտ։ Նոյնպէս ծախվում են չափաւոր գներով **ԲՆԱԿԱՆ ՄԵՂՐԱՄՈՄԵՐ** սեփական գործարանից, **ԹԻՖԼԻՍՈՒՄ** Սիօնեկայա փողոցի վրա, **ՔՈՒԹԱՅԻՍՈՒՄ** և **ԳՕՐԻՈՒՄ**։
ԻՎԱՆ ԿՈՒՐՑՕՎ.
8—11 (2)